



Կրթության որակի ապահովման կենտրոն

12 հունվարի, 2021թ.

ՀԱՇՎԵՏՎՈՈՅՈՒՆ

2019-2020 ուստարում պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում հեռավար ուսուցման վերաբերյալ անցկացված հարցումների

1. Ներածություն

2020 թվականի ապրիլի 15-ին ՃՀՀԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում ՃՀՀԱՀ Կրթության որակի ապահովման կենտրոնը իրականացրել է հարցում հեռավար ուսուցման արդյունավետության գնահատման և թերությունների բացահայտման համար: Այդ նպատակով մշակվել է էլեկտրոնային հարցաթերթ (Հավելված 1):

2. Հարցման արդյունքների ամփոփում

Ստորև ներկայացված է հարցման արդյունքների ամփոփումը ըստ հարցաթերթում ներառված առանձին հարցերի:

Հարց 1. Նշեք Ձեր ամբիոնը:

Առցանց ուղարկված 500 հարցաթերթերից լրացվել են 141 հարցաթերթ (ինչը կազմում է ուղարկված հարցաթերթերի ամբողջ թվի 28%-ը)՝ համալսարանի բոլոր ամբիոնների դասախոսների կողմից: Ստորև բերված Աղյուսակ 1-ում ներկայացվում է ամբիոնների ցանկը ըստ՝ հարցմանը ցուցաբերած մասնակցության:

Աղյուսակ 1. Հարցմանը մասնակցած ամբիոնների ցանկը և հարցաթերթը լրացրած դասախոսների թիվը ըստ ամբիոնների.


Հ/Հ	Ամբիոնը	Դասախոսների թիվը
1	Բարձրագույն մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոն	3
2	Լեզուների ամբիոն	3
3	Ինֆորմատիկայի, հաշվողական տեխնիկայի և կառավարման համակարգերի ամբիոն	13
4	Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոն	28
5	Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության	21

	վերականգման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոն	
6	Ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն	15
7	Քաղաքաշինության ամբիոն	10
8	Ինտերիերի և էքստերիերի դիզայնի ամբիոն	8
9	Ջերմագազամատակարարման և օդափոխության ամբիոն	7
10	Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոն	6
11	Շինարարական նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների արտադրության տեխնոլոգիայի ամբիոն	5
12	Հիդրոշինարարության, ջրային համակարգերի և հիդրոէլեկտրակայանների ամբիոն	5
13	Շինարարական արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպման ամբիոն	3
14	Գեոէկոլոգիայի և կենսասանվտանգության ամբիոն	3
15	Շինարարական կոնստրուկցիաների ամբիոն	2
16	Ինժեներական գեոդեզիայի ամբիոն	2
17	Դիզայնի ամբիոն	2
18	Հիդրավլիկայի ամբիոն	2
19	Շինարարական մեխանիկայի ամբիոն	1
20	Քիմիայի, կապակցող նյութերի և սիլիկատների ամբիոն	1
21	Շինարարական մեքենաների և երթեվելության կազմակերպման ամբիոն	1
	Ընդհանուրը	141

Հարցման մասնակիցները գնահատել են հեռավար դասերի կազմակերպման արդյունավետությունը՝ 1-5 բալանոց սանդղակով, որտեղ 1 գնահատականը ցույց է տալիս, որ դասերը արդյունավետ չեն, իսկ 5-ը՝ խիստ արդյունավետ են:

Հարց 2. Ինչպե՞ս կգնահատեք հեռավար գործնական և լաբորատոր դասերի արդյունավետությունը:


Հարցման մասնակիցների մեծ մասը բարձր է գնահատել հեռավար իրականացված գործնական և լաբորատոր դասերի արդյունավետությունը (մասնակիցների 42,6%-ը նշել է «արդյունավետ է» և 17,7%-ը՝ «խիստ արդյունավետ է» պատասխանները) (Նկար 2):



Նկար 2. «Ինչպե՞ս կգնահատեք հեռավար նախագծային դասերի արդյունավետությունը» հարցի պատասխանների բաշխումը:

Հարց 3. Ինչպե՞ս կգնահատեք հեռավար նախագծային դասերի արդյունավետությունը:


Հարցման մասնակիցների մեծ մասը բարձր է գնահատել հեռավար նախագծային դասերի արդյունավետությունը (մասնակիցների 32,9%-ը նշել է «արդյունավետ է» և 20,0%-ը՝ «խիստ արդյունավետ է» պատասխանները) (Նկար 3):



Նկար 3. «Ինչպե՞ս կգնահատեք հեռավար նախագծային դասերի արդյունավետությունը» հարցի պատասխանների բաշխումը:

Հարց 4. Ինչպե՞ս կգնահատեք հեռավար դասախոսությունների արդյունավետությունը:


Հարցման մասնակիցների մեծ մասը բարձր է գնահատել հեռավար դասախոսությունների արդյունավետությունը (մասնակիցների 38,6%-ը նշել է «արդյունավետ է» և 44,3%-ը՝ «խիստ արդյունավետ է» պատասխանները) (Նկար 4):



Նկար 4. «Ինչպե՞ս կգնահատեք հեռավար դասախոսությունների արդյունավետությունը» հարցի պատասխանների բաշխումը:

Հարց 5. Արդյո՞ք կցանկանայիք հեռավար ուսուցում կազմակերպել նաև համավարակի ավարտից հետո:


«Արդյո՞ք կցանկանայիք իրականացնել հեռավար ուսուցում նաև համավարակի ավարտից հետո» հարցին հարցման մասնակիցների 53,9%-ը տվել է դրական պատասխան: (Նկար 5):



Նկար 5. «Արդյո՞ք կցանկանայիք իրականացնել հեռավար ուսուցում նաև համավարակի ավարտից հետո» հարցի պատասխանների բաշխումը:

Հարց 6. Արդյո՞ք Ձեր հեռավար դասերի վարման մեթոդաբանությունը շատ է տարբերվում համալսարանում անցկացվող դասերից:


Հեռավար դասերի կազմակերպման և իրականացման մեթոդաբանության վերաբերյալ հարցին ի պատասխան, հարցման մասնակիցների մեծ մասը (70,2%-ը) նշել է, որ հեռավար և ավանդական ուսուցման մեթոդաբանության միջև տարբերությունը մեծ չէ (Նկար 6):



Նկար 6. «Արդյո՞ք Ձեր հեռավար դասերի վարման մեթոդաբանությունը շատ է տարբերվում համալսարանում անցկացվող դասերից» հարցի պատասխանների բաշխումը:

Հարց 7. Արդյո՞ք Ձեր ծանրաբեռնվածությունն ավելացել է հեռավար ուսուցման անցնելու հետևանքով:

Այս հարցին հարցման մասնակիցների մեծ մասի (63,8%-ի) գնահատմամբ, հեռավար ուսուցման ընթացքում ավելացել է իրենց ծանրաբեռնվածությունը (Նկար 7):




Նկար 7. «Արդյո՞ք Ձեր ծանրաբեռնվածությունն ավելացել է հեռավար ուսուցման անցնելու հետևանքով» հարցի պատասխանների բաշխումը:

Հարց 8. Ին՞չ դժվարությունների եք հանդիպում հեռավար ուսուցման ընթացքում:

Հարցման մասնակիցները ներկայացրել են այն դժվարությունները, որոնց հանդիպել են հեռավար ուսուցման ընթացքում: Հարցման մասնակիցների մեծ մասը՝ 80 դասախոս (հարցման մասնակիցների 56,7%-ը) որպես հիմնական դժվարություն նշել է տեխնիկական խնդիրները: Հարցման մասնակիցները՝ որպես հիմնական դժվարություն կամ խնդիր նշել են նաև գերծանրաբեռնվածությունը, աշխատանքների անորոշությունը և ուսանողների հետ անմիջական շփման բացակայությունը:

Հարց 9. Արդյո՞ք հեռավար ուսուցման ընթացքում իրականացնում եք ուսանողների գնահատում:

Այս հարցին հարցման մասնակիցների մեծ մասը (71,2%-ը) պատասխանել է, որ հեռավար ուսուցման ընթացքում իրականացրել է ուսանողների գնահատում (Նկար 8):




Նկար 8. «Արդյո՞ք հեռավար ուսուցման ընթացքում իրականացնում եք ուսանողների գնահատում» հարցի պատասխանների բաշխումը:

Հարց 10. Ինչպե՞ս կգնահատեք ուսանողների մասնակցությունը հեռավար դասերին:

Այս հարցին հարցման մասնակիցների մեծ մասը (63,6%-ը) պատասխանել է, որ հաճախումների մակարդակը մնացել էր նույնը, հարցման մասնակիցների 20,0%-ը նշել է, որ հաճախումների մակարդակը ավելի բարձր էր, քան այն ժամանակ, երբ

դասերը անց էին կացվում համալսարանում, և 16,4%-ը՝ նշել է, որ հաճախումների մակարդակը նվազել է (Նկար 9):



Նկար 9. «Ինչպե՞ս կգնահատեք ուսանողների մասնակցությունը հեռավար դասերին» հարցի պատասխանների բաշխումը:

Հարց 11. Ինչ առաջարկներ ունեք հեռավար ուսուցման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Հարցման մասնակիցները ներկայացրել են իրենց հիմնական մեկնաբանություններն ու առաջարկությունները՝ հեռավար ուսուցման կազմակերպման և իրականացման վերաբերյալ:

Առաջարկությունները կարելի է ներկայացնել մի քանի խմբերով.

- Հեռավար ուսուցման կազմակերպման արդյունավետության բարձրացում՝ նոր հարթակների կիրառման միջոցով: Որպես ZOOM հարթակի այլընտրանքներ նշվել են Moodle, Microsoft Teams հարթակները:
- Մասնագիտական առանձնահատկությունը հաշվի առնելով կատարել ծրագրային փոփոխություններ:
- Հեռավար ուսուցման վերաբերյալ մեթոդական ցուցումների, առաջարկությունների կազմում, վերապատրաստումների իրականացում:
- Համավարակի ավարտից հետո հեռավար ուսուցման կամ հիբրիդային ուսուցման կազմակերպման հնարավորությունների դիտարկում:

Հավելված 1. Առցանց հարցաթերթ՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հարցման (հեռավար ուսուցման վերաբերյալ)

1/13/2021

Հեռավար ուսումնառության գնահատում

Հեռավար ուսումնառության գնահատում

Սիրելի գործընկերներ, ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը կոչ է անում հետևել պարետատան ցուցումներին և այս օրերին պահպանել հանգստություն: Համոզված ենք, որ միահամուռ ուժերով դիմակայելու ենք այս մարտահրավերին և շուտով վերադառնալու ենք մեր կյանքի բնականոն ընթացքին, սակայն ստեղծված արտակարգ իրավիճակում չպետք է խաթարվի ուսումնական գործընթացը: Հենց այդ նպատակով է իրականացվում հեռավար ուսուցումը, որն, իհարկե անընդհատ վերանայման և կատարելագործման կարիք ունի:

Հարգելի գործընկերներ, այս անսնուն հարցումն իրականացվում է հեռավար ուսումնառության հետագա արդյունավետության բարձրացման նպատակով:
Ձեր կարծիքը խիստ կարևոր է:

1/13/2021

Հեռավար ուսումնառության գնահատում

1. Նշեք Ձեր ամբիոնը



- ճարտարապետական նախագծման եվ ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն
- ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի եւ պատմության ամբիոն
- Քաղաքաշինության ամբիոն
- Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոն
- Գծագրության և համակարգչային գրաֆիկայի ամբիոն
- Ճանապարհների և կամուրջների ամբիոն
- Շինարարական նյութերի, պատրաստվածքների եվ կոնստրուկցիաների արտադրության տեխնոլոգիայի ամբիոն
- Շինարարական մեխանիկայի ամբիոն
- Շինարարական կոնստրուկցիաների ամբիոն
- Ինժեներական գեոդեզիայի ամբիոն
- Հիդրոշինարարության, ջրային համակարգերի և հիդրոէլեկտրակայանների ամբիոն
- Շինարարական արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպման ամբիոն

https://docs.google.com/forms/d/1S7JWdISa67YNPQD1NjciEG0zcUk8f3VqSO5_R-9yJg/edit#response=ACYDBNI_99IKsE8bJEAZRpg7ocIZI_... 2/6

- Նյութերի դիմադրության ամբիոն
- Տեսական մեխանիկայի ամբիոն
- Դիզայնի ամբիոն
- Ինտերիերի և էքստերիերի դիզայնի ամբիոն
- Ջերմագազամատակարարման և օդափոխության ամբիոն
- Քիմիայի, կապակցող նյութերի և սիլիկատների ամբիոն
- Գեոէկոլոգիայի և կենսաանվտանգության ամբիոն
- Յիդրավիկայի ամբիոն
- Շինարարական մեքենաների և երթվեկության կազմակերպման ամբիոն
- Ֆիզիկայի և էլեկտրատեխնիկայի ամբիոն
- Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոն
- Ինֆորմատիկայի, հաշվողական տեխնիկայի և կառավարման համակարգերի ամբիոն
- Լեզուների ամբիոն
- Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոն

2. Ինչպես կգնահատեք հեռավար գործնական և լաբորատոր դասերի արդյունավետությունը

	1	2	3	4	5	
Արդյունավետ չեն	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	Արդյունավետ են

3. Ինչպես կգնահատեք հեռավար նախագծային դասերի արդյունավետությունը

	1	2	3	4	5	
Արդյունավետ չեն	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	Արդյունավետ են

4. Ինչպես կգնահատեք հեռավար դասախոսությունների արդյունավետությունը

	1	2	3	4	5	
Արդյունավետ չեն	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	Արդյունավետ են

5. Արդյո՞ք կցանկանայիք հեռավար ուսուցում կազմակերպել նաև համավարակի ավարտից հետո

- Այո
- Ոչ

6. Արդյո՞ք Ձեր հեռավար դասերի վարման մեթոդաբանությունը շատ է տարբերվում համալսարանում անցկացվող դասերից

- Այո
- Ոչ

7. Արդյո՞ք Ձեր ծանրաբեռնվածությունն ավելացել է հեռավար ուսուցման անցնելու հետևանքով

- Այո
- Ոչ

8. Ի՞նչ դժվարությունների եք հանդիպում հեռավար ուսուցման ընթացքում

- Բջջային կապ
- Տեխնիկական խնդիրներ
- Գերձանրաբեռնվածություն
- Ուսանողների բացակայություն
- Աշխատանքների անորոշություն
- Հետադարձ կապի բացակայություն
- Other:

9. Արդյո՞ք հեռավար ուսուցման ընթացքում իրականացնում եք ուսանողների գնահատում

- Այո
- Ոչ

10. Ինչպես կգնահատեք ուսանողների մասնակցությունը հեռավար դասերին



- Հաճախումներն ավելի մեծ են, քան համալսարանում
- Հաճախումներն ավելի փոքր են, քան համալսարանում
- Հաճախումները նույնն են

11. Ի՞նչ առաջարկներ ունեք հեռավար ուսուցման արդյունավետության բարձրացման ուղղությամբ



This content is neither created nor endorsed by Google.

Google Forms